

# Գծանկար

Գծանկարչություն առարկայի նպատակն է՝ ավագ դպրոցում, 10-12-րդ դասարաններում ուսուցողական առաջադրանքների միջոցով գործնականում յուրացնել կերպարվեստում կարեւոր համարվող այնպիսի հիմնարար գիտելիքներ, ինչպիսիք են հեռանկարը, հարթության վրա ծավալի գծակոնստրուկտիվ կառուցումը, ըստ առարկայի կառուցվածքի նրա ծավալի վրա լուսաստվերի բաշխվածության օրենքները: Պրակտիկ գործունեության ընթացքում ձեռք բերել կատարողական վարպետության որակներ:

Գծանկարչության արվեստանոցը լուսավոր է եւ կահավորված անհրաժեշտ մասնագիտական գույքով (նկարակալներ, տախտակներ, աթոռներ) գիպսե զանազան երկրաչափական մարմիններով, օճանմաններով եւ արձաններով, նատյուրմորտների համար անհրաժեշտ տարատեսակ կենցաղային եւ այլ առարկաներով ու տարբեր տոնայնության դրապիրովկաներով, ինչպես նաեւ ինտերնետին միացած համակարգչով, մասնագիտական գրքերով, տեսանյութերով եւ ֆիլմերով:

Դասերը կազմակերպելու ընթացքում ուսուցիչը ըստ անհրաժեշտության կիրառում է իր պատրաստած, կամ գրքերից ու համացանցից վերցրած դիդակտիկ նյութեր, որոնք օժանդակ նշանակություն ունեն դասերը կազմակերպելու համար: Սովորողները դասերին հաճախում են գծանկարչության համար անհրաժեշտ նյութերով ու գործիքներով (թուղթ, մատիտներ, ռետին, գոճգամներ եւ այլն), ինչպես նաեւ իրենց հետ ունենում են նկարչական թղթապանակներ, տնային աշխատանքների եւ ճեպանկարի թղթերի համար:

Գծանկարչություն առարկայի ուսուցման ընթացքը համակարգվում է ըստ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի գեղ. ավագ դպրոցում նկարչություն սովորելու համար նախատեսված ժամանակահատվածի և իրականացվում է հաշվի առնելով ուսանողների պատրաստվածության մակարդակների տարբերությունը, ֆիզիկական և առողջական խնդիրները, պահպանելով նախապատրաստական պարզ դասընթացներից դեպի բարդ ու խորացված ուսուցման անցնելու փուլերը:

Դասարաններում սովորում են տարբեր պատրաստվածություն, գիտելիքների տարբեր մակարդակ ու նախասիրություն ունեցող աշակերտներ, որոնք իրենց հետագա ուսուցումը կապում են տարբեր ԲՈՒՀ-երի հետ: Ըստ այդմ ուսուցման ընթացքը պահանջում է թե անհատական եւ թե ընդհանուր մոտեցում: Ընդհանուր մոտեցման հիմքում ընկած է գծանկարչությանը վերաբերվող հիմնարար գիտելիքները, գծանկարչության համար անհրաժեշտ կամ առաջնային նյութերով (գրաֆիտային մատիտներ, ածուխ, սեպիա, ռետին եւ այլն) աշխատելու կարողությունը, որոնք փորձարկվում են ինչպես առանձին վարժությունների, այնպես էլ բնօրինակից առաջադրանքներ կատարելու ժամանակ:

Տեսական եւ տեխնիկական բաժինների որոշ թեմաներ փորձարկվում են առանձին վարժություններում:

Բնօրինակից նկարելու համար բավարար չէ առարկայի մասին ունեցած ընդհանուր տպավորությունը: Անհրաժեշտ է նկարչական գրագիտության կանոնների և օրենքների իմացություն ու դրանց գործնական կիրառում: Բազմապլան առաջադրանքները տարածական խնդիրներ լուծելու համար պարտադիր պայմաններ են հանդիսանում: Տարատեսակ առաջադրանքներ կատարելիս սովորողները բացի

վերլուծական-հետազոտական խնդիրներից, հմտանում են նաև գծանկարչական հնարքներում, տիրապետում տարբեր նյութերով աշխատելու եղանակներին: Սովորողներն այցելում են ցուցահանդեսներ եւ թանգարաններ որպես ուսումնահետազոտական եւ կրթական նշանակության միջավայրեր:

Սովորողներին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

**1. Նվազագույն,-**

առարկայի ծավալի կառուցման սկզբունքների յուրացում, տոնի միջոցով տարածական եւ պլանային խնդիրների լուծում:

**2. Միջին պահանջներ, որը ներառում է նաև նվազագույնը,-**

Տեսողական վերլուծության եւ կատարողական հնարքների միջոցով տարատեսակ առարկաների նյութականության եւ ֆակտուրայի ստացում, նկարչական տեխնիկական մեթոդներից անցում դեպի նուրբ նկարչական խնդիրների լուծման:

**3. Առավելագույն պահանջները՝**

Հիմնվելով նախորդ երկու պահանջների վրա, պլաստիկ անատոմիայի իմացություն, գիպսից եւ բնորդից գլուխներ նկարելու համար:

Արվեստանոցում ձեռք բերված գիտելիքները աշակերտներն ամրապնդում են տանը նույն բովանդակությամբ աշխատանքների միջոցով, անհատական ինքնուրույն աշխատանք կատարելու պարտադիր բաղկացուցիչներից են նաև ճեպանկարները եւ վարպետների ստեղծագործություններից պատճենելը:

Առաջադիմող աշակերտները մասնակցում են ինչպես ներկրթական, այնպես էլ հանրապետական կամ միջազգային զանազան ցուցահանդեսների եւ նախագծերի: Բոլոր աշխատանքները թվայնացվում եւ տեղադրվում են համացանցում գտնվող անհատական թղթապանակների մեջ, առավել ամփոփիչ եւ ներկայացուցչական դարձնելով կատարված աշխատանքը:



